## Ի՞նչ պետք է իմանալ հավելյալ

Ացելբիան հազվադեպ կարող է հանգեցնել գլխուղեղի ախտահարման, որը կոչվում է «պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա» կամ ՊՄԼ: Այն կարող է ունենալ մահացու ելք:

**ՊՄԼ-ի նշաններն են.**

- գիտակցության մթագնում, հիշողության կորուստ կամ կոգնիտիվ խանգարումներ
- հավասարակշռության կորուստ, քայլելու կամ խոսելու խանգարումներ
- մարմնի մկանային ուժի միակողմանի նվազում կամ թուլություն
- տեսողության վատացում կամ կորուստ:

Եթե դուք ունեք թվարկած նշաններից որևէ մեկը, ապա անմիջապես տեղեկացրեք դրա մասին Ձեր բժշկին:

## Որտեղի՞ց կարող եմ ստանալ հավելյալ տեղեկություն

Հավելյալ տեղեկության համար ընթերցեք Ացելբիա դեղի կիրառման հրահանգը:

## Գրառումների համար

## Գրառումների համար

# Պացիենտի տեղեկատվական քարտ

Ոչ ուռուցքային հիվանդություններով բուժվող պացիենտների համար



BIOCAD

## Ինչու՞ են ինձ տվել այս քարտը

Այս դեղը, որը Դուք կիրառում եք, կարող է բարձրացնել Ձեր վարակվելու հավանականությունը: Այս քարտը Ձեզ կհուշի՝

- Ինչ պետք է իմանալ մինչև Ացելբիա կիրառելը
- Որ նշաններն են վկայում վարակի մասին
- Ինչ պետք է անել, եթե կարծում եք, որ ունեք վարակ:

Քարտի դարձերեսին նշվում է Ձեր և Ձեր բժշկի անունը և հեռախոսահամարը

## Ի՞նչ պետք է անել այս քարտը

- Այս քարտը միշտ Ձեզ մոտ պահե՛ք, օրինակ՝ դրամապանակում կամ պայուսակում:
- Ցույց տվե՛ք այս քարտը ցանկացած բժշկի, բուժքրոջ կամ ատամնաբույժի, ում այցելում եք, այլ ոչ միայն այն բժշկին, ով Ձեզ նշանակել է Ացելբիա:

!

Պահե՛ք այս քարտը Ացելբիա դեղի վերջին դեղաչափը ստանալուց հետո երկու տարի: Պատճառն այն է, որ կողմնակի ազդեցությունները հնարավոր է զարգանան բուժման ավարտից մի քանի ամիս անց:

## Ո՞ր դեպքերում չպետք է կիրառել Ացելբիա

Մի՛ կիրառեք Ացելբիա, եթե ունեք ակտիվ վարակ կամ լուրջ խնդիրներ՝ կապված իմունային համակարգի հետ:

Տեղեկացրե՛ք ձեր բժշկին կամ բուժքրոջը, եթե ստանում եք կամ նախկինում ստացել եք դեղեր, որոնք կարող են ազդել Ձեր իմունային համակարգի վրա՝ ներառյալ քիմիաթերապիայի դեղերը:

## Բուժման առաջին օրը և կոնտակտային տվյալներ

Վերջին ներարկման օրը

Առաջին ներարկման օրը

Պացիենտի անուն ______________________

______________________________

Բժշկի անուն ______________________

Բժշկի կոնտակտային տվյալներ

______________________________

Բժշկի այցելելիս համոզվե՛ք, որ ունեք Ձեր կողմից կիրառվող բոլոր դեղերի ցանկը՝ նրան ցույց տալու համար

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին կամ բուժքրոջը եթե ունեք հարցեր այս տեղեկատվական քարտի վերաբերյալ:

## Որո՞նք են վարակի նշանները

Ուշադրություն դարձրեք վարակի հետևյալ հնարավոր նշաններին.

- բարձր ջերմություն կամ հազ
- քաշի նվազում
- ցավ՝ վնասվածքի բացակայության դեպքում
- ընդհանուր վատ ինքնազգացողություն կամ թուլություն
- այրող ցավ միզելիս

**Եթե զգում եք վերոնշյալներից որևէ մեկը, ապա անմիջապես տեղեկացրեք դրա մասին Ձեր բժշկին**:

Դուք պետք է նաև տեղեկացնեք բժշկին, Ացելբիա դեղով Ձեր բուժման մասին: